«ԱՊԱՎԵՆ ՏԵՐՄԻՆԱԼ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք.Երևան, Արարատյան 95;
Հեռ.՝ (+374 60) 65 65 50;
էլ-հասցե՝ terminal@apaven.com

www.apaven.com

«APAVEN TERMINAL»
CLOSED JOINT-STOCK COMPANY
95, Araratyan str., Yerevan, RA;
Tel.; (+374 60) 65 65 50
E-mail: terminal@apaven.com

Նոյեմբերյանի խոշորացված համայնքի համայնքապետ
Պարոն Արսեն Աղաբաբյանին

№ 31
12.12.2024թ.

Մեծարգո պարոն Աղաբաբյան՝

2012թ. Երևանում հիմնադրված «ԱՊԱՎԵՆ ՏԵՐՄԻՆԱԼ» ՓԲԸ-ն այսօր, ՀՀ խոշորագույն մաքսային պահեստը լինելով, իրականացնում է բազմատեսակ բեռների համար անհրաժեշտ բարձման, բեռնաթափման , պահեստավորման և այլ տիպի աշխատանքներ:

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով՝ 2023թ «ԱՊԱՎԵՆ ՏԵՐՄԻՆԱԼ» ՓԲԸ ձեռք բերեց Այրում երկաթուղային կայարանին հարակից տարածքը՝ նմանատիպ գործունեության ընդլայնման նպատակով: Բարեկարգման և վերանորոգման աշխատանքները իրականացնելուց հետո «ԱՊԱՎԵՆ ՏԵՐՄԻՆԱԼ» ՓԲԸ ապահովեց բեռների սպասարկման անհրաժեշտ ծավալ՝ ստեղծելով կայուն նոր 8 աշխատատեղ:

Սակայն ընթացիկ տարվա ՀՀ հյուսիսային շրջաններում ուժգին ջրհեղեղը խափանեց երթևեկությունը Վրաստանից Հայաստանի խորքը ընթացող երկաթուղային ճանապարհը, որի հետևանքով մեր երկիր մատակարարվող ռազմավարական բեռները սահմանային Այրում կայարանից այն կողմ տեղաշարժվել այլևս չէին կարող:

Չնայած այն բանի, որ ջրհեղեղի հետևանքով վնասվել էր նախ մեր Այրումի տերմինալը, այնուամենայնիվ որոշում ընդունվեց հենց այս տարածքը օգտագործելով՝ սկսել երկաթուղային վագոններից վերաբարձում ավտոմեքենաներ, և դրանով իսկ իրականացնել ՀՀ մատակարարումը, կենսական անհրաժեշտության ապրանքներով: Մինչև երկաթուղու ամբողջական վերականգնումը (20 օր) Այրումի այս տերմինալը, ըստ էության դառնալով Հայսատանի հյուսիսային դարպաս, գերծանրաբեռնված ռեժիմով կատարեց իր վրա դրված պատասխանատու աշխատանքը: Այժմ, երբ իմի է բերվում աշխատանքի ընթացքում բոլոր դրական և բացասական երևույթներն ակնհայտ է դառնում, որ նման իրավիճակներին պատրաստ լինելու համար անհրաժեշտ է ունենալ ավելի բարձր թողունակությամբ տեղական տերմինալ: Բացի լրացուցիչ տեխնիկական միջոցներից պետք է կառուցվի տերմինալ մտնող երկրորդ երկաթուղային փակուղային գիծ, որը ըստ մեր հաշվարկների կեռապատկի տերմինալի աշխատանքային պոտենցիալը:

Ուստի, պարոն Աղաբաբյան, խնդրում ենք Ձեզ, թույլատրել կառուցել 170 մետր երկարությամբ, 3.7 մետր լայնությամբ երկաթուղային փակուղային գիծ մինչև մեր տարածք:

<<Հարավ-Կովկասյան երկաթուղի>> ՓԲԸ-ի հետ հարցը համաձայնեցված է:

Ակնկալում ենք Ձեր համաձայնությունը և աջակցությունը :

Հարգանքով՝

«ԱՊԱՎԵՆ ՏԵՐՄԻՆԱԼ» ՓԲԸ

Տնօրեն Էդուարդ Սարիբեկյան